ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐԳԱՐԱՅԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ МАРГАРЫ

*ՀՀ Արմավիրի*
*մարզպետ*
*Պարոն Հ.Մաթևոսյանին*

*« 23»դեկտեմբերի 2020թ.*
*Թիվ 121*

*Հարգելի Պարոն Մաթևոսյան*

*Արմավիրի մարզի Մարգարայի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում Մարգարա համայնքի ավագանու 23 դեկտեմբերի 2020թ. կայացած թիվ 08 հերթական նիստի որոշումները:*

*Առդիր՝ 11 էջ:*

*ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* */Է.Ենոքյան/*



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-24925-2020
24 12 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2020թ.

N - 8 նիստի
N -19 որոշում

# ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝ Հայստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարա համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1.Նինել Գարեգինի Ալեքսանյան | | | |
| 2.Կարեն Մարտինի Գարեգինյան | | | |
| 3.Կարեն Միհերի Եղիշյան | | | |
| 4. Բարիս Արտավազդի Սարգսյան | | | |

Մարգարայի համայնքի ղեկավար /Է. Ենոքյան/

«23»դեկտեմբերի 2020թ.

Յավելված
Արմավիրի մարզի
Մարգարա համայնքի
ավագանու N 08 հերթական նիստի
2020 թվականի դեկտեմբերի 23-ի
թիվ 19 որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

18.Օրակարգի հաստատման հարցը:

Զեկ.՝ Է.Ենոքյան

19. Մարգարա համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող բյուջետային հիմնարկների 2020թվականի դեկտեմբերի 16-ից 18-ը կայացած գույքագրման արդյունքների հաստատման հարցը:

Զեկ.՝ Է.Ենոքյան

20.Մարգարա համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և իր ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատողների 2021թ հաստիքացուցակը ,թվաքանակը և դրույքաչափը հաստատելու հարցը:

Զեկ.՝ Է.Ենոքյան

21.Մարգարա համայնքի 2021թ-ի <<Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը >>հաստատելու հարցը:

Զեկ.՝ Է.Ենոքյան

22.Մարգարա համայնքի 2021թ բյուջեի հաստատման հարցը:

Զեկ.՝ Է.Ենոքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 23»դեկտեմբերի 2020թ.

N 08 նիստի
N 20 որոշում

ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՑ 18-Ը ԿԱՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարա համայնքի 2020թ .դեկտեմբերի 16-ից 18-ը ընկած գույքագրման արդյունքները ըստ հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
| --- | --- | --- | --- |
| 1.Նինել Գարեգինի Ալեքսանյան | [signature] | | |
| 2.Կարեն Մարտինի Գարեգինյան | [signature] | | |
| 3.Կարեն Միհրի Եղիշյան | [signature] | | |
| 4. Բարիս Արտավազդի Սարգսյան | [signature] | | |

Մարգարայի համայնքի ղեկավար՝ [signature, stamp] /Է. Ենոքյան/

«23»դեկտեմբերի 2020թ.

Հավելված

Արմավիրի մազի

Մարգարա համայնքի

ավագանու N8 հերթական նիստի

2020 թվականի դեկտեմբերի 23-ի

թիվ 20 որոշման

2020թվականի դեկտեմբերի 16-ից 18-ը կայացած գույքագրման արդյունքում Արմավիրի մարզի Մարգարա համայնքի համայնքապետարանում և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող բյուջետային հիմնարկներում հետագա շահագործման համար ոչ պիտանի ապրանքանյութական արժեքներ ներկայացնող ապրանքներ չեն հայտնաբերվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«23» դեկտեմբերի 2020թ.

N 8նիստի
N 21որոշում

# ՄԱՐԳԱՐԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԻՐ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել՝ Մարգարա համայքի համայնքապետարանի աշխատակազմի և իր ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ(ստորագ.) դեմ (ստորագ.) ձեռնպահ (ստորագ.)

1.Նինել Գարեգինի Ալեքսանյան

2.Կարեն Մարտինի Գարեգինյան

3.Կարեն Մհերի Եղիշյան

4. Բարիս Արտավազդի Սարգսյան

Մարգարայի համայնքի ղեկավար՝ /Է. Ենոքյան/

«23»դեկտեմբերի 2020թ.

Հավելված N 1
Արմավիրի մարզի
Մարգարա համայնքի
ավագանու 2020թվականի –ի
դեկտեմբերի 23-ի
N08 հերթական նիստի
թիվ 21 որոշման

## ՑՈՒՑԱԿ

Մարգարա համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և իր ենթակայության հիմնարկների աշխատողների 2021 թվականի դրույքի և աշխատավարձի չափերի

| գյուղապետարան՝ | դրույք | աշխատավարձի չափ /դրամ/ |
|---|---|---|
| 1.Գյուղապետ | 1 | 270,0 |
| 2.Գյուղապետի տեղակալ | 1 | 185,0 |
| 3.Աշխատակազմի քարտուղար | 1 | 190,0 |
| 4.Առաջատար մասնագետ | 1 | 185,0 |
| 5.Առաջին կարգի մասնագետ | 1 | 120,0 |
| 6.Առաջին կարգի մասնագետ | 1 | 120,0 |
| 7.Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 119,0 |
| 8.Աղբաթափության բանվոր | 1 | 108,0 |
| 9.Հավաքարար | 1 | 92618 |
| Ընդամենը | | 1389618 |
| Գրադարան՝ | | |
| 1.Գրադարանի վարիչ | 1 | 92618 |
| Մշակույթի տուն՝ | | |
| 1.Մշակույթի տան տնօրեն | 1 | 92618 |
| Ընդամենը հաստիքացուցակով | | 1574854 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 23» դեկտեմբերի 2020թ.

N 8 նիստի
N 22որոշում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ « ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 18-րդ կետով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել՝ Մարգարա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1.Նինել Գարեգինի Ալեքսանյան | | | |
| 2.Կարեն Մարտինի Գարեգինյան | | | |
| 3.Կարեն Միերի Եղիշյան | | | |
| 4. Բարիս Արտավազդի Սարգսյան | | | |

Մարգարայի համայնքի ղեկավար՝ /Է. Ենոքյան/

«23»դեկտեմբերի 2020թ.

Հավելված
Արմավիրի մարզի
Մարգարա համայնքի
ավագանու 2020թվականի-ի
դեկտեմբերի 23-ի
թիվ 08 նիստի թիվ 22 որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարա համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1.հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 4500դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 9000դրամ

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ,

բգ) 1000 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 21000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 900 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 900 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակուեան փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կաս սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 1500 դրամ:

ւյնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների 3000 դրամ.
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններին ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ քի տարածքում՝ 5000 դրամ

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

բ)բնական գազի լցակայանի, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000դրամ

գ) այլ ապրանքների (այդ թվում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի) վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 25000 դրամ.

4. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 50.000 դրամ.

5. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

| | |
|---|---|
| ա) առևտրի օբյեկտների համար | 25 000 դրամ. |
| բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ | 50 000 դրամ. |
| գ) բաղնիքների (սաունաների) համար | 200000 դրամ. |
| դ) խաղատների կազմակերպման համար | 500000դրամ |
| ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ | 250000 դրամ. |
| զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ | 100000 դրամ. |

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 00 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է: 50 00 դրամ:

9. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 դրամ:

10. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ:

11. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 23 »դեկտեմբերի 2020թ. N-08նիստի

N-23որոշում

# ՄԱՐԳԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Մարգարա համայնքի 2021 թվականի բյուջեն:

եկմատային մասով 41670,2 հազար դրամ, ծախսային մասով 41670,2 հազար դրամ: Այդ թվում հաստատել

1. Համայնքի բյուջեի եկամուտները, հատված 1
2. Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման, հատված 2
3. Համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման, հատված 3
4. Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջին հավելորդը կամ դեֆիցիտ, հատված 4
5. Համայնքի բյուջեի հավելորդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտը, հատված 5
6. Հաստատել բյուջեի հատված 6-ը
7. Թույլատրել համայնքապետին տարվա ընթացքում կարիք առաջանալու դեպքում, համայնքապետի որոշմամբ կատարել հոդվածային փոփախություն համայնքի 2021թ. բյուջեի 20 տոկոսի չափով:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ(ստորագ.) | դեմ (ստորագ.) | ձեռնպահ (ստորագ.) |
|---|---|---|---|
| 1.Նինել Գարեգինի Ալեքսանյան | | | |
| 2.Կարեն Մարտինի Գարեգինյան | | | |
| 3.Կարեն Միերի Եղիշյան | | | |
| 4. Բարիս Արտավազդի Սարգսյան | | | |

Մարգարա համայնքի ղեկավար՝ /Է. Ենոքյան/

<<23>>դեկտեմբերի 2020թ

Հավելված N1
Արմավիրի մացի
Մարգարա համայնքի
2020 թվականի դեկտեմբերի 23-ի
ավագանու N 08հերթական նիստի
թիվ 23 որոշման

Հաստատել Արմավիր մարզի Մարգարա համայնքի 2021թ-ի բյուջեն 29250,5 հազար դրամով:

1.Եկամտային մասով 41670,2 հազար դրամ:
2.Ծախսային մասով 41670,2 հազար դրամ:
3.Բյուջեյի հատված 1, 2, 3, 6-ը 41670,2 հազար դրամ:
4. .Բյուջեյի հատված 4-ը և 5-ը:

Թույլատրել ֆինանսական բաժնին տարվա ընթացքում կարիք առաջանալու դեպքում համայնքապետի որոշմամբ կատարել հոդվածային փոփոխություններ, համայնքի 2021թ-ի բյուջեյի 20 տոկոսի չափով:

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 07*

*ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի 23-12-2020թ-ի կայացած ավագանու 08հերթական նիստի մասին:*

*Մասնակցությամբ՝*

*Համայնքի ղեկավար՝ Է. Ենոքյանի*

*Ավագանու անդամներ՝*

1.Նինել Գարեգինի Ալեքսանյան

2.Կարեն Մարտինի Գարեգինյան

3.Կարեն Մհերի Եղիշյան

4. Բարիս Արտավազդի Սարգսյան

Համայնքի ավագանու անդամններ Իշխան Լևոնի Առաքելյանը և Նաիրա Գրիգորի Մարտիրոսյանը չեն ներկայացել 23.12.2020թ կայացած ավագանու 08 հերթական նիստին հիվանդության պատճառով :

*Ավագանու անդամներ՝*

1.Նինել Գարեգինի Ալեքսանյան

2.Կարեն Մարտինի Գարեգինյան

3.Կարեն Մհերի Եղիշյան

4. Բարիս Արտավազդի Սարգսյան

*Համայնքի ղեկավար՝* *Է.Ենոքյան*